Արձանագրություն N 2

*Էլեկտրոնային առողջապահության համակարգի լայնածավալ ներդրման աշխատանքների ապահովման, առողջության առաջնային պահպանման կենտրոնների կարիքների համար, համակարգչային սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/43» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի*

ք. Երևան

«03» «Մայիսի» 2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ — Ծ. Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ — Հ. Խուրշուդյան, Ա. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար — Հ. Սարգսյան

*1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին*

*(Ծ. Սարգսյան)*

Ընդունել ի գիտություն, որ 01.04.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի ապրիլի 17-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի ապրիլի 18-ին ժամը 11:00-ին: 2024 թվականի ապրիլի 19-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «ԷՄ ընդ ԷՎ Հոլդինգ» ՍՊԸ | emandevholding@mail.ru | 01347501 |
| 2 | «Անտիսիգնում» ՍՊԸ | antisignum@mail.ru | 02315265 |
| 3 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | khv_84@mail.ru | 01254973 |
| 4 | «Էլմարկետ» ՍՊԸ | tamarapetrosyan@eldorado.am | 00112776 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

*2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին*

*(Ծ. Սարգսյան)*

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «ԷՄ ընդ ԷՎ Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը::

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:*

*3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին*

*(Ծ. Սարգսյան)*

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ԷՄ ընդ ԷՎ Հոլդինգ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ մասի պահանջների:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

*4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

*(Ծ. Սարգսյան)*

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 18.04.2024թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին*

---

*(Ծ. Սարգսյան)*

Հրավերի վերաբերյալ 08.04.2024թ. ստացվել է հետևյալ հարցումը՝ «Հարգելի գործընկեր Խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցադրումը կապված Հրավերի 2.4 կետի հետ: Եթե առաջարկվող ապրանքների արտադրող կազմակերպության Fitch վարկանիշը 2024թ դրությամբ /BBB/ գերազանցում է Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշին /BB-/, ապա այդ դեպքում արդյո՞ք անհրաժեշտ է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնել որակավորման ապահովում:», որին ի պատասխան սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացվել է հետևյալ պարզաբանումը՝ «Հարգելի մասնակից: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին մասի գ) պարբերության «Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Շնորհված վարկունակության վարկանիշը պետք է լինի առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով, հետևաբար գերազանցելու դեպքում ևս ընդունելի է:»

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

*(Ծ. Սարգսյան)*

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

**Որոշվեց.**

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/43» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 1-ին չափաբաժնի մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել ոչ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ մասը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/43» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 04.05.2024թ.-ից մինչև 13.05.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ -------------------- Ծ. Սարգսյան

Անդամներ՝ -------------------- Հ. Խուրշուդյան

-------------------- Ա. Մուրադյան

Քարտուղար՝ -------------------- Հ. Սարգսյան

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք համակարգիչների վերաբերյալ վերջնական գներով 18.04.24թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Էմ ընդ Եվ Հոլդինգ» ՍՊԸ հայտի ապահովումը բացակայում է | | | | | «Էլմարկետ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | սեղանի համակարգիչներ | 3,457 | 250,000.00 | 864,250,000 | 112,222,221 | 0 | 112,222,221 | 32,462.31 | 32,462.31 | 720,208,333 | 144,041,666.6 | 864,249,999.6 | 208,333.33 | 250,000.00 |
| 2 | համակարգչային պլանշետ | 614 | 180,000.00 | 110,520,000 | 143,333,333.00 | 0 | 143,333,333 | 233,441.91 | 233,441.91 | | | 0 | 0.00 | 0.00 |

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք համակարգիչների վերաբերյալ վերջնական գներով 18.04.24թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Անտիսիգնում» ՍՊԸ | | | | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | սեղանի համակարգիչներ | 3,457 | 250,000.00 | 864,250,000 | 800,000,000 | 160,000,000 | 960,000,000 | 231,414.52 | 277,697.43 | 864,250,000 | 172,850,000 | 1,037,100,000 | 250,000.00 | 300,000.00 |
| 2 | համակարգչային պլանշետ | 614 | 180,000.00 | 110,520,000 | 100,000,000 | 20,000,000 | 120,000,000 | 162,866.45 | 195,439.74 | 110,520,000 | 22,104,000 | 132,624,000 | 180,000.00 | 216,000.00 |